

## ԳԼՈՒԽ ԻԳ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Պատմութիւնը երկայն կը նկարագրէ Բուղայի դիւրին քաջութիւնքը, որ խաբէութիւն, դաւաճանութիւն եւ ստերդումնութիւն ատելի լաւ կը գործածէր քան թէ զէնք, ինչպէս տեսանք Վասպուրականի նահանգը, ուր Արծրունի Աշոտս եւ եղբօր Գուրգէնի իշխանութիւնը կործանեց առանց բարեկարգելու. նոյնպէս կ'ընէր, ուր որ հասներ, գիտէր արել՝ բայց ոչինչ շինել:

Գարնան իւր առաջին յարձակումը Յայաստանի հիւսիսային կողմը եւ Տփիսիսի վրայ եղաւ: Այս քաղաքը, որ այն ժամանակ Կուր գետին ձախ ափանց վրայ շինուած էր եւ բլուրովին փայտաշէն, հսաք անունով մահմեդականի մը սեփականութիւն էր, որ չուզէր հնազանդիլ Բուղայի եւ իւր քաղաքն ամբողջ մոխիր դարձնելէն վերջ ինք էլ սպանուեցաւ նորա հրամանաւ:

Անկէ յարձակեցաւ հիւսիս՝ Ծանարաց վրայ, որ կովկասեան քաջ ժողովուրդ մ'էին եւ երկայն պատերազմներով ոչինչ չի կարողացաւ ընել ու խայտառակաբար ետ դարձաւ եւ իր վրեժը թափեց Սիւնեաց երկրին վրայ. մեզ ծանօթ Աշոտ ամրացաւ իւր լեռանց մէջ, իւր մեծ եղբայրը Վասակ քաջութեամբ պատերազմելով գնաց Գարդմանաց Կտրիճ իշխանին ապաւինեցաւ, եւ նա կապած մատնեց զնայ Բուղայի ձեռք, որ ի վարձ իւր մատնութեան զինքն եւս բռնեց խաբէբայ խոստմունքներով, եւ շղթայի զարկաւ:

Արշաւեց Բուղայ Աղուանից երկիրը, բայց հոն Եսայի Ապովմուսէ քաջութեամբ պատերազմեցաւ իրեն դէմ, խորտակեց նորա զօրութիւնը, ոչ խաբէբայ խոստմանցն հաւատաց եւ ոչ զէնքերէն վախցաւ, այլ աստուծոյ ապաւինեալ դէմ գրաւ անօրինին եւ քաջալերութիւն եղաւ Զրիստոսի հաւատացելոց:— Վասպուրական լսելով Բուղայի պարտութիւնքը, սիրտ առաւ եւ ժողովուրդը զէնքի դիմելով, քանի մը իշխաններ գլուխն առած՝ սկսաւ իր բռնաւորաց դէմ պատերազմիլ եւ նոցայ լուծը խորտակել. չորս հազարի չափ